

Ա. ԻՅԵԿԿԻԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԼԱՍԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՏՐԱԴԻՑԻԱՆԵՐԸ

Հայ ժողովուրդն իր նյութական և հոգևոր կուլտուրան, իր արվեստն ու գրականությունը ստեղծել է ազատության և անկախության համար մղած դարավոր անհաշտ պայքարի, հերոսական մաքառման բովում: Ահա թե ինչու՝ ազատագրական պայքարը կազմում է հայ կլասիկ գրականության հիմնական բովանդակությունը. ազատասիրության և հայրենասիրության գաղափարները կարմիր թելի պես անցնում են մեր գրականության գլուխ-գործոցների միջոցով: Նույնը, ամենայն իրավամբ, կարելի է ասել նաև մեր ժողովրդական բանավեստի, հատկապես էպոսի մասին, որ նախորդել և ապա ուղեկցել է հայ գրականությանը: Նշանակալից է և բնորոշ, որ հայ ժողովուրդը վաղնջադույն ժամանակներում հյուսելով իր ծագման առասպելը («Հայկ և Բել»), նրա հիմքում դրել է ազատության գաղափարը, որով տոգորված է մեր պատմագրությունն ու գրականությունը՝ հինգերորդ դարից սկսած. «Մեր գրականության իշխող պաֆոսը, նրա միսիան,— նշում է Բազակյանը,— դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության, ազգային կուլտուրայի և անկախ պետության, ընդդեմ բռնության, ստրկության»:

Մեր գրականությունը բռնակալների, հարստահարողների, ջարդարարների գրականություն չէ, այլ մարտնչող, բողոքող, ազատաբաղձ ոգու տոգորված աշխատանքի, հումանիզմի, արդարության վսեմ իդեալներով:

Այդ պայքարի ոգին կայծակի պես անցել է հայ գրականության մի ծայրից մյուս ծայրը, սկսած Մովսես Խորենացուց, Նղիշեից, Սեբեոսից, միջին դարերի միջով, մեր ֆոլկլորի միջով, մինչև Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան, Պատկանյան, Բաֆֆի, Ծերենց, Թումանյան, Սիամանթո, Վարուժան, Վ. Տեր-յան ներառյալ՝:

Այս հեղինակների շարքը կարելի է լրացնել ուրիշ շատ անուններով, կարելի է նշել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը, ինքնատիպությունը. կարելի է ցույց տալ, թե այդ հեղինակներից յուրաքանչյուրի ստեղծագործության մեջ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ինչ ուրույն հրանգներով է արտացոլվել և գեղարվեստորեն մարմնավորվել, սակայն, այդ ընդարձակ ուսումնասիրության խնդիր է:

Հայրենասիրությունն ու ազատասիրությունը, կազմելով հայ գրականության գաղափարական բովանդակությունը, դարերի ընթացքում ստացել են տրագիդիայի ուժ, փոխանցվել սերնդից-սերունդ: Այդ գաղափարները միշտ ուժով են դրսևորվել հայ կլասիկ գրականության ականավոր ներկայացուցիչների ստեղծագործություններում, որովհետև այդ գաղափարների ակունքը եղել է հայ ժողովրդի կյանքը, հայկական կենդանի իրականությունը:

¹ «Երկերի ժողովածու», հատ. IV, էջ 139:

Խոր արմատներով կապված լինելով հայ ժողովրդի և նրա պատմության հետ, Իսահակյանն իր ստեղծագործություններում շարունակել ու զարգացրել է հայ գրականության ազատասիրական և հայրենասիրական տրագիցիաները: Իր գիտակցական և ստեղծագործական կյանքը սկսելով հայ ժողովրդի համար աղետաբեր և փոթորկալից մի ժամանակաշրջանում, Իսահակյանը շատ խորն է ապրել հայրենիքի տառապանքն ու վիշտը: Իր ժողովրդի գլխին պայթող փոթորիկները «անցնում էին նրա սրտի միջով», խոցոտում, արյունոտում էին նրա խորագագ հոգին: Մշտավառ սերը դեպի հայրենիքը, խոր կարեկցությունն ու վիշտը դարերով հալածված ու տառապած իր ժողովրդի նկատմամբ՝ Իսահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունն է:

Մեծ բանաստեղծի հայրենասիրության ակունքը հայ ժողովրդի հերոսական ու ողբերգական անցյալն էր, հայկական դաժնադեմ իրականությունը և հայ կլասիկ գրականությունը: «...Հայ գրականության հուշարձանները իմ մեջ սեր էին դաստիարակում դեպի հայրենիքը, դաստիարակում էին քաղաքացիական գիտակցականություն», — գրում է բանաստեղծը¹: Իսահակյանը խորն ականածանքով ու սիրով է խոսում Աբովյանի և Նալբանդյանի, Պատկանյանի և Րաֆֆու, Մերենցի և Մուրացանի, ինչպես նաև մյուս հայ կլասիկների մասին, նշելով նրանցից յուրաքանչյուրի հմայքն ու ազդեցությունը իր սերնդի երիտասարդության, և մասնավորապես, իր վրա: Սակայն, ազդեցությունը չպետք է ընկալել ռաուի նեղ իմաստով, քանի որ Իսահակյանը հիշյալ հեղինակներից և ոչ մեկի ուղղակի ազդեցությանը չի ենթարկվել. այստեղ խոսքը հայ գրականության հայրենասիրական տրագիցիաների մասին է, որ նախորդներից ժառանգելով, պատմական այլ իրադրության պայմաններում, խոր ու անկրկնելի ինքնատիպությամբ զարգացրել է Իսահակյանը:

Աբովյանի «Վերք Հայաստանին», Նալբանդյանի «Ազատությունը» և «Խտալացի աղջկա երգը», Պատկանյանի «Արաքսի արտասուրը» և «Ազաու երգերը», Րաֆֆու «Կաթնբլան» ու «Սամուելը», Մերենցի «Երկունքն» ու «Թորոս Լեոնին», Մուրացանի «Գեորգ Մարգարետունին» ու «Ռուզանը» Իսահակյանին ոգեշնչել են հայրենասիրության և ազատասիրության գաղափարներով:

Իսահակյանի վշտի և ողբերգության աղբյուրը եղել է հայրենիքը. «Հայաստանը ես միշտ և հանապազ կրել եմ իմ հոգում», — գրում է նա, — ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոնբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երեբունյքը և Հռիփսիմեի տաճարը: Լսել եմ Նեոպոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով»: Իր քնքուշ զգացմունքներով ու խոր խոհերով բանաստեղծը հայրենիքի հետ է եղել միշտ. նույն երգել է հայրենի բնության վսեմ գեղեցկությունը, հարազատ ժողովրդի ստեղծագործական կորովը («Մնացի կարոտ իմ հայրենիքին...»): «Պարիսպության» երգերի ոգով ու ոճով հյուսած, անմիջական ու խոր «Ձմեռն անցավ, եկավ զարուն...» բանաստեղծության մեջ նրա պատկերած հայ գեղեցկուհին իր պանդուխտ յարին կանչում է «վաթանի» քաղցրությունն ու հրապույրը երգելով: Իսահակյանի այս երգը քաղաքական անկախությունը կորցրած, օտար ու շար նվաճողների հրից ու սրից հայածված հայ ժողովրդի պատմական ճակատագիրը բնութագրող խորապես տրագիկ ու ժողովրդային ստեղծագործություններից է, որի մեջ բանաստեղ-

¹ «Երկերի ժողովածու», հատ. IV, էջ 80:

² Նույն տեղում, էջ 169:

ծը ինքնատիպ ու մեծ արվեստով միացրել է հայ կլասիկ պոեզիայի և բանարվեստի հայրենասիրության ու ժողովրդայնության տրագիցիաները:

Ուշի-ուշով հետևելով Իսահակյանի ստեղծագործական զարգացմանը, տեսնում ենք, որ նա իր գրական գործունեության վաղ շրջանից սկսած, երգել է ոչ միայն հայրենի չքնաղ բնությունը, հայրենիքի սերն ու կարոտը, այլև, իր նախորդների տրագիցիաներին հավատարիմ, արտացոլել է հայրենիքի քաղաքական բախտը, հարազատ ժողովրդի տառապանքն ու պայքարը, լավագույն ապագայի աներկմիտ հավատը: 1894—1895 թթ. գրած «Իգիթ Սարգար» լեզենդում բանաստեղծը գեղարվեստորեն մարմնավորել է հայրենիքի համար անձնադոհձվելու բարձր գաղափարը: Լեզենդի հերոսը իր անձնական երջանկությունը և կյանքը զոհաբերելով հայրենիքի ազատությանը, աստղ է դառնում, անմահանում է: Սա լիովին համապատասխանում է հին հայերի այն խորհրմաստ հայացքին, թե՛ «քաջք, անկեալք ի պատերազմի՝ յառնեն»:

Հայրենիքին նվիրված իր ստեղծագործություններում, թե՛ գաղափարական բովանդակությամբ և թե՛ արվեստով, Իսահակյանը հավատարիմ է մնում ժողովրդայնությանը: Մեծ բանաստեղծի հայրենասիրական երկերի այս առանձնահատկությունը ցայտուն կերպով դրսևորված է «Է՛յ, ջա՛ն-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես...» բանաստեղծության մեջ, որ հայ ժողովրդի քաղաքական բախտի խոր ընդհանրացումն է: Հայրենի չքնաղ բնության և հարազատ ժողովրդի տառապանքի հակադրությամբ բանաստեղծն արտահայտել է հայրենիքի վիշտը, որ անմիջական է, խորաթափանց ու սրտառուչ:

Է՛յ, ջա՛ն-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ.
Ջրերդ անուշ, հովերդ անուշ,
Մենակ լալերդ արուն-ծովի մեջ...

Իսահակյանի մեկնակետը ժողովրդի գեղարվեստական մտածողությունն է, ժողովրդի ոգուն ու ոճին ստեղծագործաբար հավատարիմ լինելու սկզբունքը: Ինչպես սիրո երգերում, այնպես էլ հայրենասիրական երկերում խոսքի նկատմամբ Իսահակյանը զուսպ է. նա գեղեցիկ էպիտետներ չի շռայլում. նրա սիրային լիրիկայում մենք չենք գտնի Չարոյի կամ Շուշիկի արտաքինի նկարագրությունը. նա բավականանում է «սիրուն» էպիտետով («Սիրուն Չարոս»): Նույնը նաև հայրենիքի նկատմամբ. «Է՛յ, ջա՛ն-հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես...»: Որքա՛ն գորով ու քնքշություն, որքա՛ն խոր հույզ ու սեր է արտահայտում այդ տողը. ինչպես մոր, այնպես էլ հայրենիքի նկատմամբ բանաստեղծն իր սերն արտահայտում է «ջան» էպիտետով. «մայրիկ-ջա՛ն», «ջա՛ն-հայրենիք»: այդ միավանկ էպիտետի իմաստը չի սահմանափակվում դրա (էպիտետի) համարժեք «հոգիս» կամ «հոգյակս» բառի շրջանակներում. «ջան»-ը արտահայտում է և՛ հոգի, և՛ հոգեբանություն, և՛ սեր, և՛ նվիրվածություն: Բանաստեղծը հայրենիքն անձնավորել է մոր կերպարի մեջ. «Մենակ լալեֆդ առուն-ծովի մեջ» տողը մեզ ավելի է հուզում, քան օտար լծի տակ տառապող ժողովրդի վիճակի երկարապատում նկարագրությունները կամ փրոուդց զեղումները. հայրենիքը մի մայր է, որի որդիքը («բալեքը») գտնվում են «արուն-ծովի մեջ»: Այսպիսով, հայրենիքի վիշտը համեմատելով մոր վշտի հետ, բանաստեղծը հասնում է խոր հուզականության. նա հարուցում է

բուռն սեր ու կարեկցանք թե՛ դեպի գորովագութ և վշտատանջ մայրը (հայրենիքը) և թե՛ «արուն-ծովի մեջ» տառապող նրա «բալեքը» (ժողովուրդը):

Հայկական դառն իրականությունը վշտով ու թախիծով է լցրել բանաստեղծի հոգին, որի հարազատ արտահայտություններն են նրա ստեղծագործությունները. հայրենիքի ու ժողովրդի վիշտն արտահայտելու համար նա դիմում է հիպերբոլիկ պատկերների ու ընդհանրացումների: Բնությունն անձնավորելու և բնության միջոցով իր վիշտն արտահայտելու միջոցը ծագում է ժողովրդական բանավեպից: Ռ. Պատկանյանից միանգամայն անկախ, խոր ինքնատիպությամբ և ժողովրդական ոճի ուրույն գույներով ու նրբերանգներով, Իսահակյանը Արաղի (Մայր-Արաքսի) մեջ մարմնավորում, սիմվոլացնում է հայ ժողովրդի պատմությունն ու իրականությունը, ազգային վիշտն ու տառապանքը, ժողովրդի բողոքն ու ցասումը («Արաղին» բանաստեղծությունը):

Մեր սարերեն, խո՛ր ձորերեն,
Պղտո՛ր-պղտո՛ր կուգաս, Արա՛ղ,
Մեր սրտերեն, խոր աչքերեն
Արուն՝ քամեր կերթաս, Արա՛ղ...

Սակայն, հայ ժողովրդի դարավոր տառապանքի, նրա ազգային վշտի հանդեպ անտարբեր է եղել աշխարհը. նա եղել է անգութ, նրա խիղճը՝ «քար-ապառաժ» (բանաստեղծը նկատի ունի արևմտյան «մեծ» պետություններին). պատմության դառն փորձը հիմք է տալիս բանաստեղծին այլևս չհավատալու, որ «քար-աշխարհը» կարող է երբևէ գթալ ու լսել տառապող ժողովրդի «մորմոքն ու բողոքը»:

Ա՛խ, աշխարհը անխղճմտանք,
Քեզ չի գթա, ազի՛զ-Արա՛ղ,
Քու բողոքին, ու մորմոքին
Չի էլ լըսի, արնո՛տ Արա՛ղ...

...Դուն էլ, Արա՛ղ, մեր արունով
էս աշխարհի խղճի վրա
Ի՛նչվի՛ր, դարձի՛ր սև-դառն ծով,—
Թո՛ւյն ու արո՛ւն, ազի՛զ Արա՛ղ...

Եթե Ռ. Պատկանյանի հայտնի բանաստեղծության մեջ Արաքսը խոսում է, հանդիմանելով բանաստեղծին՝ իր դարավոր նիրհը վրդովելու և բյուրավոր ցավերը նորոգելու համար, ապա Իսահակյանի Արաղը լուռ է. նրա փրփուրները, ինչպես Դուրյանը կասեր, հատակումն են. նա իր պղտոր ու արյունոտ ալիքների «խուլոր-մուլոր» ընթացքով հաստատում է բանաստեղծի արդարացի բողոքն ու ցասումը:

Քսաներորդ դարը նոր տառապանքներ է բերում հայ ժողովրդին: Հայրենիքի «անդարման վերքը» բանաստեղծն զգում է իր «բյուր խոցոտված» սրտում. ո՛չ բնության շքեղ զարդերը, ո՛չ սիրո հրապույրները այլևս չեն սփռվում մեծ հայրենասերի վիրավոր հոգին. նա այլևս սիրո քնքուշ խոսքեր չէ շնչում սիրած աղջկա ականջին, այլ սրտի արյունով գրում է իր «ճնշված ու դժբախտ ազգի» մեծ վիշտը, դարավոր տառապանքը («Դու չես հասկանա» բանաստեղծությունը):

Չեմ տեսնում շքեղ զարդերը գարնան,
 Վշտից խավարեց գոհարն աչքերիս,
 Ծանրացավ աշխարհն ուսերիս վրա,
 Զուր ես հարցրեմ պատճառը վշտիս:

Բանաստեղծը ողբերգականորեն է ապրում իր ժողովրդի, հետևապես և իր մարդկային և ազգային արժանապատվությանը հասցված վիրավորանքը: Բռնակալության ծանր կապանքները կաշկանդել են տաղանդավոր ու շինարար ժողովրդի և նրա բանաստեղծի ստեղծագործ մտքի վսեմ խոյանքները:

Իմ մոր սուրբ խոսքը — ծաղրի նշավակ,
 Իմ հայրենիքը — սիրտըս ու հոգիս —
 Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ,
 Ինչ չես ըմբռնի անդունդը վշտիս:


...Սիրել, երազել, թռչել եմ ուզում,
 Բայց շղթան ինձ պինդ գամել է գետնին.
 Կուռ լուծը ազգիս՝ ուսերս է փշրում,
 Չես կարող հասնել իմ անափ վշտին:

Բանաստեղծի «անափ վշտի» աղբյուրը հարազատ ժողովրդի ապրած անօրինակ ողբերգությունն էր. որքան մեծ էր բանաստեղծի սերը դեպի հայրենիքն ու ժողովուրդը, նույնքան խորն էր և նրա վիշտը: Ռուս մեծ բանաստեղծ Նեկրասովը իրավացիորեն նկատել է, թե՝

Кто живет без печали и гнева,
 Тот не любит отчизны своей...

Հայ կլասիկ պոեզիայի, ինչպես և անցյալի ժողովրդական երգերի բնորոշ առանձնահատկությունն է եղել վիշտը, որ պայմանավորված էր հայ ժողովրդի դաժան, տառապալից կյանքի պայմաններով: Մեր ազգային լիրիկան գերազանցապես ծնունդ է այն խոր վերքերի, որ ժողովուրդն ստացել է օտար նվաճողներից և ներքին հարստահարիչներից: Ահա թե ինչո՞ւ Բսահակյանը իր վշտոտ ու սրտամորմոք բանաստեղծություններն անվանել է «Երգեր ու վերքեր»: Հայրենիքի անսփոփ վիշտն ու տառապանքն էր, ի վերջո, նաև «Արու-լալա-Մահարի» հռչակավոր պոեմում արտահայտված հուսահատության և հոռետեսության բուն ակունքը:

Բուրժուական աշխարհի դեմ ըմբոստացած և ցարական դաժան կարգերից հալածված հայրենասեր բանաստեղծը դեգերում էր «օտար ավերում», երբ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հայ ժողովրդի գլխին պայթեց գերագույն աղետը՝ մասսայական կոտորածները Արևմտյան Հայաստանում: Հայ ժողովրդի ողբերգությունը խոր խոցեց բանաստեղծի սիրտը: Այդ արյունոտ եղեռնը համարելով մի զարհուրելի կոնտրաստ հավերժորեն գեղեցիկ, հրապույրներով ու հրայրքներով լի բնության հանդեպ, մեծ քնարերգուն մի պահ նույնիսկ հանգեց մարդկային տառապանքի նկատմամբ անտարբեր ու անկարեկից բնության և ողջ աշխարհի ժխտմանը: Ծակայն, լավատեսությամբ, որ հայ կլասիկ գրականության բնորոշ գծերից մեկն է, հաղթանակում է իր ժողովրդին և նրա գրականության լավագույն տրագիգիաներին հավատարիմ բանաստեղծի մեջ: 1917 թվականին Բսահակյանը գրում է իր գլուխգործոցներից մեկը՝ «Մեր նախահայրերը» պատմական բալլադը, որ հայրեն-



նիքի և ժողովրդի անպարտելի ուժի և անմահության հիմն է: Վեհ ու հանդիսավոր շնչով գրված իր այս երկը հայրենասեր բանաստեղծն ուղղել էր հայկական կոտորածների հեղինակների և նրանց հովանավորող իմպերիալիստների, ինչպես նաև փոքր ազգերի ձուլման և ոչնչացման «պատգամախոսների» դեմ, հավաստելով հայ ժողովրդի ապրելու և հարատևելու անկողոպտելի իրավունքը: Բանաստեղծը տոգորված էր անշեջ հավատով իր խոշտանգված, բայց միշտ կենսունակ ժողովրդի պայծառ ապագայի հանդեպ. նա փայփայում էր այն հույսը, որ հայ գեղջուկի «արյունազանգ արտերի վրա դրախտի փառքով պիտի հուրհրա մեր ազատության ոսկի արշալույսը» («Հայոց գեղջուկի ծավալուն արտեր...» բանաստեղծությունը):

Հայկական կոտորածներից ավելի քան քառորդ դար հետո, ընդհանրացնելով հայ ժողովրդի պատմական անցյալը, որ եղել է անհավասար ու հերոսական մաքառում իր քաղաքական ու կուլտուրական ինքնությունը, իր ազգային գոյությունը պահպանելու համար, Իսահակյանը գրում է. «Հայ ժողովուրդը շատ արյուն թափեց այս անհավասար գոյամարտի մեջ, կոտորվեց և նվազվեց շատ, բայց և այնպես կարողացավ իր նվիրական մատյանների շնորհիվ, իր գութանի և աշխատանքի շնորհիվ պահպանել իր լեզուն, իր ոգին և ազգությունը»¹:

«Մի ձեռքում Թուր-Կայծակին՝ պաշտպանել է նա իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը, մյուս ձեռքում կուլտուրայի զենքերը՝ հերկել է իր հողը և կերել իր արդար հացը, ստեղծել է հոյակապ դասական լիզու, արվեստի հրաշալիքներ»²:

Շինարար-ստեղծագործ ուժը Իսահակյանը համարում է հայ ժողովրդի կենսունակության, նրա գոյության հիմքը. աշխատասիրությունը և խաղաղասիրությունը հայ ժողովրդի բնորոշ հատկանիշներն են: Պայքարելով իր ազատության և անկախության համար, նա միշտ բռնած է ունեցել գութանի մաճն ու մատյանը: Այս գաղափարն է գեղարվեստորեն մարմնավորված Իսահակյանի «Հորս գութանը» գեղեցիկ պատմվածքի մեջ (1912): «Աշխարհը գութանի վրա է ընկնում» — ահա հայ ժողովրդի իմաստուն կենսափիլիսոփայությունը: Գութանը, որ աշխատավոր ժողովրդի և աշխատանքի սիմվոլն է, չի կարելի ոչնչացնել, սպանել, — հայ շինականի համոզմունքն է սա. — բիրտ ուժը և արյունոտ զենքը անգոր են խաղաղ, շինարար աշխատանքի հանդեպ. ապագան պատկանում է աշխատավոր, ստեղծագործ ժողովրդին: «Հորս գութանը» պատմվածքի մեջ ցայտուն կերպով դրսևորված է ժողովրդի ծնցից ելած, նրա հետ բյուր թելերով կապված, նրան միշտ հավատարիմ բանաստեղծի ճշմարիտ դեմոկրատիզմը, որ եղել է հայ առաջավոր դրականության հիմնական առանձնահատկություններից մեկը:

Հայ ժողովրդի քաղաքական և կուլտուրական մաքառման դարավոր պատմության մեջ հզոր զենք է հանդիսացել լեզուն, որով կերտել է նա իր հոգևոր կուլտուրան՝ դրականությունը, պատմագրությունն ու փիլիսոփայությունը: «Ամեն բան քայքայվեց Հայաստանում, հայ ժողովրդի շուրջը ամեն բան փուլ եկավ, բայց կանգուն մնաց լեզուն՝ հարուստ, հոյակապ, պատկառելի, — դրում է Իսահակյանը:

¹ «Երկերի ժողովածու», հատ. IV, էջ 160:

² Նույն տեղում, էջ 192:

Իսկ լեզուն, պետականությունը կորցրած, ստրկացած մի ժողովրդի համար ամեն ինչ է։

Լեզուն փոխարինել է և՛ պետություն, և՛ բանակ, և՛ բերդ։ Ժողովուրդների պատմական փորձը ապացուցեց, որ երբ մի ոտնահարված, ստրկացած ժողովուրդ պահում է իր լեզուն, նա ունի իր ազատության բանալին իր ձեռքում՝ գերության զնդանից ուշ կամ կանուխ ազատվելու բանալին։ Հայ ժողովուրդը իր ազատության ոսկե բանալին միշտ կրում էր իր հետ, որի համար նա ոչինչ չխնայեց, դարերով արյուն թափեց և ոչինչ չխնայեց։

Իսահակյանը լեզուն բնորոշում է որպես «թափառող հայրենիք, հոգեկան հայրենիք», որ հայ ժողովուրդը, հայ մարդը միշտ տարել է իր հետ՝ ուր որ գնացել է. «...Այդ լեզուն հավատ, կորով ներշնչեց նրան, մեր աշխատավոր ժողովրդին՝ կովելու լավագույն ապագայի համար, զենքեր տվեց՝ թշնամիներին հաղթահարելու համար...»¹։

Հայ ժողովրդի այդ հերոսական մաքառումը՝ մայրենի լեզվի և գրի միջոցով պահպանելու իր ազգային գոյությունն ու ինքնուրույնությունը, Իսահակյանը գեղարվեստորեն ընդհանրացրել է «Ազգային երգը» և «Անպարտելի ոգին» պատմվածքներում։

«Ազգային երգը» վերաբերում է այն ծանր ժամանակաշրջանին, երբ ցարական կառավարությունը, ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին, հետևողականորեն կիրառելով փոքր ժողովուրդներին ձուլելու իր նենգ քաղաքականությունը, փակել էր հայկական դպրոցները, բայց անձնվեր ժողովրդական ուսուցիչները գաղտնի դպրոցներում հայ մանուկներին մայրերի լեզվի այբուբենն էին սովորեցնում։ Իսահակյանի խորիմաստ այս պատմվածքում թոթովախոս մանուկների շրթունքներին իբրև ազգային հիմն հնչող հայոց այբուբենը սիմվոլացնում է հայ ազգային կուլտուրան, աներևույթ, բայց հզոր այն ուժը, որով հայ ժողովուրդը դիմադրել է օտար նվաճողների կործանարար ասիմիլյացիոն քաղաքականությանը և, ի վերջո, հաղթանակով է դուրս եկել. «Քանի հայոց այբ-բենը կապրի, հայը չի՝ մեռնի» — եզրակացնում է բանաստեղծը։

«Անպարտելի ոգին» տրամաբանորեն լրացնում և ամբողջացնում է «Ազգային երգը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը։ Դա խորապես հուզիչ մի պատմություն է այն մասին, թե ինչպես կոտորածներից մազապուրծ արևմտահայության բեկորները սիրիական անապատում օրհասական պայքար են մղում իրենց ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև ազգային կուլտուրան՝ մայրերի լեզուն, գիրն ու գրականությունը պահպանելու համար. ով կարողացել էր՝ հրի ու սրի բերանից կորզել էր իր զավակների հետ նաև գրագիր մատյանները և իր հյուծված ուսերին առած, կրում էր իբրև թանկագին մի բեռ, իբրև իր էության անբաժան ու նվիրական մի մասնիկը։ Թշնամին կոտորել էր հայ ժողովրդին, խոշտանգել էր նրան, սակայն անկարող էր եղել սպանելու նրա կենսունակությունը, ապրելու կամքը, աշխատանքի և ստեղծագործության ոգին։ Իսահակյանը պատմում է, թե ինչպես հայ մայրերը, անապատի ավազները գիրք ու տետրակ դարձրած՝ իրենց մարտիրոսված մանուկներին սովորեցնում էին մայրենի լեզվի այբուբենը...

Արյունոտ անցյալի այս էջը հարուցում է խոր ակնածանք մեր ժողովրդի

¹ «Երկերի ժողովածու», հատ. IV, էջ 165։

հոգեկան վսեմ հատկությունների, մշտավառ կենսունակության և ստեղծագործական անպարտելի ոգու նկատմամբ:

Սովետական շրջանում ևս հայրենիքին նվիրված բանաստեղծություններում Իսահակյանն անդրադառնում է հայ ժողովրդի պատմական անցյալին և գեղարվեստական ընդհանրացումներով իմաստավորում այն: «Դաժան դարերի մղձավանջի մեջ», օտար նվաճողների ձեռքի սմբակների տակ տրորվել ու ավերվել է հայրենիքը, ժողովուրդը մահացու հարվածներ է կրել իր անսահման թշնամիներից, անհավասար, օրհասական գոյամարտ է մղել իր ազատության համար, և այժմ, փյունիկի նման, անցյալի մոխիրներից վերածնված, ապրում է կրկին, հերկում իր հայրենի հողը, զարգացնում իր հնամենի և հարուստ կուլտուրան, իր լեզուն, հպարտ՝ նվաճած հաղթանակներով, վստահ՝ վաղվա պայծառ օրվա նկատմամբ («Ցորենի ծփուն արտերի եզրին...»):

Դու նորից ծաղկել, ցնծում ես նորից...
Այնքան ժամանակ, որ պիտի հերկե
Սևահողդ հին՝ քո կտրիճ որդին,
Եվ գուանըդ վառ՝ սերըդ պիտ երգե,
Դու պիտի ծաղկիս, երկիր հայրական,
Քո ոգով, ոճով և բարձրագլուխ.
Դու պիտի հնչես, հնչե՛ս հաղթական
Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Իսահակյանը կրկին անդրադառնում է պատմական անցյալին, իմաստավորում այն՝ արդիականության լույսով: Իր մի շարք ստեղծագործություններում, հայ ժողովրդի հերոսական անցյալը վկայակոչելով, հայրենասեր բանաստեղծը խրախուսում էր ֆաշիստական հորդանների դեմ անձնվիրաբար մարտնչող հայ ռազմիկներին («Հայ ճարտարապետությունը», «Ժողովրդի երգը», «Քայլերգ»):

* * *

Ժողովրդական լայն մասսաների, և հատկապես գյուղի աշխատավորության տնտեսական ու սոցիալական ծանր վիճակը, տրտունջն ու բողոքը ուժգին արձագանք են գտել Իսահակյանի ստեղծագործության մեջ: Այս տեսակետից ուշագրավ է նրա առավել ժողովրդականություն վայելող երկերից մեկը՝ «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ...» բանաստեղծությունը, գրված 1898 թվականին: Այս բանաստեղծության, ինչպես և Իսահակյանի լավագույն այլ ստեղծագործությունների ժողովրդականացմանը նպաստել են ոչ միայն ժողովրդի սրտին ու հոգուն այնքան մոտ, այնքան հարազատ հույզն ու գաղափարը, այլև վերջիններիս արտահայտման նուրբ ու խոր արվեստը, որի շնորհիվ բանաստեղծն իր խոսքը դարձրել է մտերիմ ու սրտագրավ: Բանաստեղծն ինքը չէ, որ խոսում է այստեղ. նա իր եսը որևէ չափով չի զգացնում. բանաստեղծին հարազատ, նրա սերն ու կարեկցությունը վայելող «աշխարհի խորթ տղերքն» են, որ անմիջական, կենդանի խոսքով արտահայտում են իրենց տրտունջն ու բողոքը «քար-աշխարհում» տիրող անարդարության, սոցիալական չարիքի դեմ: Խոսքերը պարզ ու անպաճույճ են, սովորական, առօրյա, բայց զգացմունքը, հույզը՝ թափանցող, վարակիչ: Դժգոհ տիրող սոցիալական անարդար ու չար կարդերից, Իսահակյանը ելք էր որոնում, որոնում էր ճշմարտությունը, բայց դրա նույնիսկ «հետքն ու շուքը» չէր գտնում:

Զայնրս հնչում է խավարի խորքից...
 Երթա, հայտնվիր, սուրբ ճշմարտություն,
 Իս քեզ եմ փնտրել իմ կյանքի շեմքից,
 Եվ տես, քարացա անհուն տանջանքում.
 ...Հոգնած եմ հիմա, անուժ ու հիվանդ,
 Իայց հավատում եմ — ունիս գոյություն...

Ժողովրդի հետ անխզելի կապերով կապված բանաստեղծը խորապես հավատում էր «ճշմարտության վեհ հաղթանակին»:

1905 թ. ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում Իսահակյանը ելքը դեպի ճշմարտության և արդարության ներդաշնակ հանրակարգը տեսնում է պայքարի մեջ: Առույգ, մարտական տրամադրությամբ են համակված այդ շրջանում գրած նրա մի շարք բանաստեղծությունները: Միանգամայն այլ է նաև նրա պատկերավորման սիստեմը: Բանաստեղծի հոգին «կյանքի մրրկով զարնված» թևաթափ թռչունը չէ, որ անզոր թպրտում էր «անդուռ ու անել մեծ վանդակի մեջ»։ այժմ նրա ըմբոստ հոգին մրրկահավի է նման, որի տարերքը փոթորիկն է. նա արտահայտում է մարտաշունչ տրամադրություն, քաղաքական պայքարի տենչ: Բանաստեղծը «աշխարհի խորթ տղերքի» պասսիվ բողոքը, «տրտունջն ու մրմունջը» չէ երգում, այլ անհաշտ պայքարի է կոչում նրանց՝ բռնության և անարդարության վրա կանգնած «քար աշխարհի» դեմ («Անհուն վրեժի և ատելության...»):

1905 թվականի ռևոլյուցիայի բարերար ազդեցության տակ Իսահակյանի աշխարհայացքի և ստեղծագործության մեջ կատարված բեկման ուշագրավ գեղարվեստական վավերագրեր են «Հացի երգը» բանաստեղծությունը և «Շաբրո Վալիշվիլի» պատմվածքը (1906): Դրանք ուշագրավ են նաև նրանով, որ հանդիսանում են գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն տրամադրությունների և շարժումների ուրույն արձագանքը հայ գրականության մեջ:

«Հացի երգը» բանաստեղծության հերոսը պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի շնորհիվ քաղաքական գիտակցության հասած աշխատավոր գյուղացին է, որ իր բախտակիցներին ապստամբության կոչ է անում ընդդեմ իրենց հարստահարիչների: Բանաստեղծն իր ձայնը միացնում է ազատագրական պայքարի ուղին բռնած աշխատավորության ձայնին.

Ե՛լ, աշխատավոր, ստրուկ ժողովուրդ,
 Եվ լուծդ գցի՛ր, եղի՛ր ինքնիշխան.
 Քրտինքիդ տերը մենակ դու եղի՛ր,
 Մեկեն կըկորչեն աղա, խան, իշխան...

...Առաջ գնացեք, աշխատավորներ,
 Երգելով գովքը ձեր ազատ հացին.
 Առաջ անհողողդ, երկրի տերն եք դուք՝
 Հացն է լո՛ւյս ու զ՛նք, ո՛ւժ ու իրավունք,
 Երգեցե՛ք գովքը ձեր արդար հացին,
 Ձեր ազատության — ձեր հալալ հացին...

Սոցիալական անարդարության դեմ բողոքի և պայքարի գիծը, որ, ինչպիսիք են շենցինք, հանդիսանում է հայ կլասիկ գրականության և Իսահակյանի հիմնական առանձնահատկություններից մեկը, իր զարգացումն ու ամբողջացումն է ստացել մեծ բանաստեղծի «Սասմա Մհեր» վիպերգում:

Ցասկոտ ու ըմբոստ Մհերը հայ ժողովրդի պատմական անցյալի ճշմարտացի և մեծ ընդհանրացումն է, լավագույն ապացույցներից մեկը այն դրույթի, թե ժողովրդական բանահյուսությունը, ինչպես նաև գրականությունը, պատմության ինքնատիպ և սնբաժան ուղեկիցներն են: «Մհերի մեջ հայ ժողովուրդը դրել է իր բովանդակ հոգին,— գրում է Իսահակյանը,— անվերջանալի պայքարով և դառնությամբ ի իր պատմության փիլիսոփայությունը, իր անշեջ և անընկճելի հավատը լավագույն ապագայի համար, որ պիտի իրականանա՝ աշխարհը մի անգամ քանդվելուց և շինվելուց հետո, և ստեղծելով Մհերի վսեմ կերպարը, հայ էպոսը ազգային նեղ շրջանակից ելնելով, ստանում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս»¹:

«Սասմա Մհերը» ստեղծագործական անակնկալ չէր. դա նախապատրաստված էր բանաստեղծի զարգացման ամբողջ ընթացքով: «Սասմա Մհերի» տարրերը առկա էին Իսահակյանի նախորդ շրջանի մի շարք ստեղծագործություններում, ինչպիսիք են՝ «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ...», «Ազատության Զանգ», «Անհուն վրեժի և ատելության», «Հացի երգը» բանաստեղծությունները և ուրիշները: «Սասմա Մհերը» այդ բոլորի սինթեզն է և, միաժամանակ, նոր որակ Իսահակյանի ստեղծագործության մեջ:

Ժողովրդական էպոսի համաձայն, Մհերը մնալու է «Ազոավու-քար»-ում, մինչև որ աշխարհը քանդվի ու նորից շինվի, և ցորենի հատիկը դառնա մասուրի չափ: Իսահակյանի ժողովրդի գեղեցիկ երազանքն էր լավագույն ապագայի նկատմամբ, որ իրականացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ. հայ ժողովուրդը դուրս եկավ ցարիզմի ու կապիտալիզմի խավար զնդանից: Իսահակյանը, ելնելով հայ ժողովրդի պատմական կյանքում տեղի ունեցած այդ մեծագույն իրադարձությունից և զարգացնելով հայ ժողովրդական բանահյուսության ու գրականության ազատագրական տրադիցիաները, իր վիպերգում Մհերին դուրս է բերում «Ազոավու-քար»-ից: Իսահակյանի Մհերը «հազար ու բյուր» ռամիկների գլուխն անցա՛, պայքարում է և հաղթանակում, իրականացնելով ժողովրդի դարավոր տենչը՝ «ռամկություն, ռամկի օրենք ու իրավունք» բերելով աշխարհ: Այսպիսով, Իսահակյանի վիպերգը հանդիսանում է մեր հազարամյա հերոսական էպոսի տրամաբանական զարգացումն ու ամբողջացումը և հայ ժողովրդի ազատագրության պատմական փաստի մեծարվեստ ու խորիմաստ ընդհանրացումը:

* * *

Ազատասեր և ազատաբաղձ հայ ժողովրդի համար միշտ թանկ է եղել իրեն բախտակից, իր նման ճնշված ու հալածված ժողովուրդների ազատագրական պայքարը, և հայ կլասիկ գրականության հիմնական առանձնահատկություններից ու լավագույն տրադիցիաներից մեկը ժողովուրդների եղբայրության ու համերաշխության գաղափարն է: Սայաթ-Նովան, Աբովյանը, Նալբանդյանը, Սունդուկյանը, Թումանյանը, Հակոբյանը, հայ գրականության բոլոր առաջավոր ներկայացուցիչները եղել են այդ մեծ գաղափարի պատդամախոսները: Հայ ժողովրդի քաղաքական բախտը և երջանիկ ապագան սերտորեն շաղկապված տեսնելով ժողովուրդների ազատագրական ընդհանուր պայ-

¹ «Ընտիր երկեր», Երևան — Մոսկվա, 1948, էջ 464:

քարի հետ, նրանք մեկնակետ են ունեցել սյն ճշմարտությունը, թե՛ մի ժողովուրդ չի կարող ազատագրվել ու երջանիկ լինել, երբ նրա հարևան ժողովուրդները տառապում են բռնության շղթաներում:

Իսահակյանն իր ստեղծագործության մեջ պաշտպանել ու զարգացրել է հայ կլասիկ գրականության այդ մեծ տրագիցիան ևս: Ռուսական առաջին ռևոլյուցիայի նախօրյակին (1903) հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի դաժան հալածանքների դեմ բարձրացնելով իր ձայնը, Իսահակյանը «Ազատության Ձանգ» բանաստեղծությամբ ազատագրական պայքարի էր կոչում Կովկասի բոլոր ժողովուրդներին, երգում էր ժողովուրդների համերաշխությունը, եղբայրական դաշինքը ազատության և իրավունքի համար մղվող սրբազան պայքարում:

Ազատության Ձանգ, դու վե՛հ ղողանջե
Կովկասյան վսե՛մ, վե՛հ բարձունքներից,
Ինչպես մըրըրիկ, շաշե՛, շառաշե՛
Մինչև սիգապանծ Ազատն Մասիս:

... Եվ ազատության նորոգ արևի
Ոսկի ներբողըդ, Ձանգ, զբվարթ հընչե՛.
Բյուր գագաթներից ազատ Կովկասի
Սուրբ եղբայրության տոնին մեզ կանչե՛:

Ժողովուրդների այդ «ազատական դաշինքն» ու համերաշխությունը Իսահակյանն արտահայտել է 1906 թ. գրած «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքում, ուր պատկերված է ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում օս, վրացի և հայ գյուղացիների ազատագրական պայքարը ցարի և կալվածատերերի դեմ:

Համարյա միաժամանակ գրած «Գարիբալդիականը» պատմվածքում Իսահակյանը քնքուշ սիրով ու համակրանքով է պատկերել իտալացի ժեր հայրենասեր Զիովանիի հմայիչ կերպարը, իսկ ավելի ուշ (1917) «Ժողովրդի քնարը» լեգենդում, ի դեմս գուսլյար Միրկոյի, գեղարվեստորեն մարմնավորել է թյուրքական արյունոտ լծի դեմ հերոսաբար մարտնչող սերբ ժողովրդի ազատ, անընկճելի ոգին:

Հետհոկտեմբերյան շրջանի իր մի քանի բնորոշ երկերում Իսահակյանը ճշմարիտ հայրենասերի խանդավառությամբ պատկերել է մեծ թե փոքր ժողովուրդների ազատագրական շարժումները. նրա ստեղծագործության մեջ չերմարձագանք են գտել թե՛ բազմամիլիոն չին ժողովրդի պայքարն ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստների ու ներքին հարստահարիչների, և թե՛ փոքրաթիվ բասկերի հերոսամարտն իրենց ազատության և անկախության համար («Ձինական մեծ պարսպի երգը», «Գերնիկայի նվիրական կաղնին»): Եվ դա օրինաչափորեն բխում է Իսահակյանի խոր հումանիզմից ու դեմոկրատիզմից, և լիովին համապատասխանում է հայ գրականության առաջավոր տրագիցիաներին:

Շարունակելով և զարգացնելով իր մեծ նախորդների նվիրական տրագիցիաները, Իսահակյանը իր ավագ ու կրտսեր ժամանակակիցների՝ Շիրվանզադեի և Հովհ. Թումանյանի, Վահան Տերյանի և Եղիշե Չարենցի հետ հայ գրականությունը բարձրացրեց մի նոր աստիճանի: Համամարդկային վսեմ գաղափարների և մեծ արվեստի բարձունքները նվաճած Իսահակյանի ստեղծագործությունը իր նշանակությամբ դուրս է եկել հայ գրականության ազգային շրջանակ-

ներից: Ապրելով և ստեղծագործելով մեր օրերում, նա սովետահայ գրականությունը հարստացնում է մեր կլասիկ գրականության մեծ և առաջավոր տրադիցիաներով, և սովորեցնում է, — ինչպես ինքն է ասել Շևչենկոյի մասին, — «ազգային ձևերի մեջ ձուլել համամարդկային զգացումներ ու գաղափարներ»: «Գրականությունը չի ներփակվում ինքն իր մեջ, — ուսուցանում է Իսահակյանը իր երիտասարդ արվեստակիցներին: — Նա (գրականությունը — Ա. Ի.) դիմում է ժողովրդին՝ գեղարվեստական բարձր վարպետությամբ արտահայտված պատգամներով: Գրականությունը բարձրացնում է ժողովրդին, դաստիարակում է նրան, կանխատեսում և ժողովրդին ցույց է տալիս երջանկության, անհատի իրական տար ազատագրության, կոմունիստական հասարակության ուղին... Գրողի վրա դրված է պատվավոր առաքելություն՝ դաստիարակել մարդուն, ոգեշնչել, բարձրացնել նրան մեծատառով Մարդու աստիճանին»:

Այս խորիմաստ տողերի մեջ է ամփոփված նա իր՝ մեր գեղարվեստական խոսքի մեծ վարպետի ստեղծագործության գրական-հասարակական նշանակությունը: